

Ա.Ռ Եղիազար (յէջմիածին) վասն Շաքրը իրի- ցու որդոյ մահուն

Սրբոյ հօրդ հասարակաց եւ Տեառնդ հոգեւորի պատկանաւորեալ ճառս առ յապաքինութիւն պատահելոյ կսկծանացդ ի պատճառէ պակասութեան Ոհանին ի մաքրագուարթ յաչաց քաղցրագթութենէդ: Քանզի եւ իմ յորժամ լուայ զլուրն բօթի՝ սոսկացաւ անձն իմ, գղրդեցան ոսկերք իմ եւ կսկիծ դառնագին վասն ընտանի հարազատութեան նորա եւ աղէտ նարդենիս վասն համչիրակութեան, զի ձեռնասուն մեր էր եւ ծանօթագէտ սիրել տայր զինքն՝ բառացի գոլով քան զծնօղսն վայրենամիտ: Սակայն եւ առաւել գալարեցան աղիք մեր ընդ գալարումն աղեաց ծնօղաց ի կողկողիլսն ողբովք ներբողինաբար յիշմամբ ի տեսիլն քաղցրագուարձ դիմաց նորա այլովք հանդերձ: Քանզի ի լուր գուժիս ողբայր եկեղեցիս ընդ աղէտ ծնօղաց դորա, վշտակից լինէին օտարք եւս ընդ մոնչեւն ձայնի հեծութեանց սոցուն յեղակարծ բօթոյն: Ձայնք լալականաց լսելի եղեն ի սասդերօդ, գուժկանք ողբոց ի հրապարակս, կականս աշխարանաց ի սահմանս բնակութեանց նոցա, ճիչք եղկութեան ի տունս նոցա, վայ ի վերայ վայլի ի մէջ ազգատօհմի նոցա եւ Ռաւճ ասողաց ի բերանս բազմաց: Իսկ ոմանց երթալն եւ ասելն նոցա թէ Դուք ողջ լերուք, պատասխանեն եւ ասեն. Մի՛ ասէք եւս մեզ ողջ լինել, զի խոնարհ եղեն մինչեւ ի հող անձինք մեր եւ յերկիր կցեցան մէջք մեր, զի ապոեցաւ ուրախութիւն մեր, խլեցաւ փառքն մեր, յափշտակեցաւ պարծանքն մեր, բարձաւ միսիթարութիւն մեր: Միթէ չէ՞ր բաւական անձուկ փափաքման մերոյ առ նա՝ որ այսօր դառնագին նոր վէրք մեզ պատահեցաւ. միթէ չէ՞ր շատ եռանդն